

Թեսթավորման հարցաշար

N	Հարցեր	Պատասխաններ
1	2	3
1.	Ինչ է տեխնիկական կանոնակարգը	<p>1. ստանդարտացման նորմատիվ փաստաթուղթ</p> <p>2. փաստաթուղթ, որով սահմանվում են արտադրանքի (ծառայության) կամ դրա հետ կապված արտադրման (կատարման) գործընթացների և մեթոդների վերաբերյալ տեխնիկական բնութագրեր</p> <p>3. միջազգային պայմանագիր</p>
2.	Տեխնիկական կանոնակարգերը որ իրավական ակտերով են սահմանվում	<p>1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ընդունված, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները, որոնցով սահմանված են ստանդարտացման օբյեկտների վերաբերյալ տեխնիկական պահանջները և անհրաժեշտության դեպքում, այդ պահանջներին համապատասխանության գնահատման ընթացակարգերը</p> <p>2. կարգադրագրերով</p> <p>3. Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերով</p>
3.	Տեխնիկական կանոնակարգերի ընդունման նպատակները	<p>1. նոր ստանդարտների մշակումը</p> <p>2. ազգային օրենսդրական դաշտի ներդաշնակեցումը միջազգայինի հետ</p> <p>3. մարդու կյանքի և առողջության, ֆիզիկական և իրավաբանական անձանց ու պետական գույքի, կենդանիների և բույսերի կյանքի և առողջության, շրջակա միջավայրի պաշտպանության, սպառողներին թյուրիմացության մեջ զգող գործոնների կանխարգելումը</p>
4.	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջները՝	<p>1. պարտադիր են</p> <p>2. կամավոր են</p> <p>3. կարող են լինել պարտադիր և կամավոր</p>
5.	Տեխնիկական կանոնակարգերի մշակման համար հիմք են ընդունվում	<p>1. միջազգային կամ դրանց հետ ներդաշնակ ազգային ստանդարտները՝ ամբողջությամբ կամ մասամբ՝ հաշվի առնելով աշխարհագրական կլիմայական և հիմնարար տեխնոլոգիական բնույթի տարբերությունների առկայությունը</p> <p>2. միջպետական ստանդարտները</p> <p>3. տեխնիկական պայմանները</p>

6.	<p>Տեխնիկական կանոնակարգերում սահմանվում են</p>	<p>1. գործողության սկզբունքներ 2. կառուցվածքային (կոնստրուկտորական) և տեխնոլոգիական լուծումներ 3. Արտադրանքի կամ ծառայությունների սպառողական (շահագործման) և կատարման բնութագրեր ու պահանջներ, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվի առնելով վնաս պատճառելու ռիսկի աստիճանը, կոնստրուկցիային կամ կատարմանը ներկայացվող պահանջների բացակայությամբ չի ապահովվում տեխնիկական կանոնակարգի նպատակների կատարումը:</p>
7.	<p>Ինչպիսի նվազագույն պահանջներ են սահմանվում տեխնիկական կանոնակարգերով՝ հաշվի առնելով վնաս պատճառելու ռիսկի աստիճանը</p>	<p>1. Տերմինաբանությանը ներկայացվող պահանջներ 2. Ճառագայթման, կենսաբանական անվտանգությանը, պայթուցանավտանգությանը, հրդեհասնվտանգությանը, մեխանիկական, արդյունաբերական և ջերմային անվտանգությանը, էլեկտրաավտանգությանը, միջուկային և ճառագայթումային անվտանգությանը, էլեկտրամագնիսական համատեղելիությանը, չափումների միասնականությանը ներկայացվող պահանջներ 3. փաթեթավորմանը և մակնշմանը ներկայացվող պահանջներ</p>
8	<p>Տեխնիկական կանոնակարգերով բացի տեխնիկական բնութագրերից և պահանջներից ինչպիսի ընթացակարգեր են սահմանվում</p>	<p>1. ընդունման կանոններ և ընթացակարգեր 2. ստանդարտացման օբյեկտին ընդունելի համապատասխանության գնահատման, համապատասխանության պարտադիր հավաստման նպատակով նույնականացման, նմուշառման ու փորձարկումների կատարման, սերտիֆիկացման մարմինների կողմից սերտիֆիկացված օբյեկտների համապատասխանության հսկողության (եթե դա նախատեսված է համապատասխանության հավաստման ընթացակարգով) իրականացման և այլ ընթացակարգեր, որոնք անհրաժեշտ են տեխնիկական կանոնակարգերի նպատակներին հասնելու համար 3. արտադրական ընթացակարգեր</p>
9.	<p>Տեխնիկական կանոնակարգերով կարող են սահմանվել քաղաքացիների առանձին կատեգորիաների պաշտպանության ապահովմանը ներկայացվող պահանջներ</p>	<p>1. Այո, անչափահասների, հղի կանանց, կերակրող մայրերի, հաշմանդամների համար 2. ոչ 3. միայն անչափահասների համար</p>

10.	<p>Եթե հնարավոր չէ որոշել մարդկանց կյանքին և առողջությանը թույլատրելի ռիսկի աստիճանը, ապա այդ դեպքում տեխնիկական կանոնակարգերում ինչ է անհրաժեշտ սահմանել</p>	<p>1.Սպառողական պահանջներ 2.Կառուցվածքին և բաղադրությանը ներկայացվող պահանջներ 3.հնարավոր վնասների և գործոնների մասին սպառողներին տեղեկատվությամբ ապահովման պահանջներ</p>
11.	<p>Որ դեպքերում են տեխնիկական կանոնակարգերով սահմանվում արտադրանքի ներկրում սահմանափակող պահանջներ</p>	<p>1.Արտադրանքի արտադրության տեխնոլոգիային ներկայացվող պահանջների բացակայության դեպքում 2.վնաս պատճառելու վերաբերյալ գիտատեխնիկական հիմնավորված փաստացի ռիսկի աստիճանի առկայության դեպքում 3.արտադրանքի իրացման գործընթացին ներկայացվող պահանջների բացակայության դեպքում</p>
12.	<p>Ընդունված տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու պայմանը</p>	<p>1.առնվազն 2 ամիս հետո 2.առնվազն 3 ամիս հետո 3.առնվազն 6 ամիս հետո</p>
13.	<p>Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի, ծառայությունների համապատասխանության պետական վերահսկողությունն իրականացնում է</p>	<p>1.Ստանդարտների ազգային ինստիտուտը 2.Տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի(ծառայությունների) համապատասխանության պետական վերահսկողությունն իրականացնող կառավարության լիազորած մարմինները 3.սերտիֆիկացման մարմինը</p>
14.	<p>Տեխնիկական կանոնակարգերով անվտանգության պահանջներից բացի ինչպիսի պահանջներ են սահմանվում</p>	<p>1.տերմինաբանությանը, փաթեթավորմանը, մակնշմանը կամ պիտակավորմանը ներկայացվող , բաղաբացիների առանձին կատեգորիաների պաշտպանության ապահովմանը ներկայացվող պահանջներ, ինչպես նաև սպառողներին թուրիմացության մեջ զցող գործոնների կանախարգելումն ապահովող պահանջներ 2.Չգայորոշմանը ներկայացվող պահանջներ 3.Արտադրանքի(ծառայության) իրացմանը (մատուցմանը) ներկայացվող պահանջներ</p>
15	<p>Կարող են ստանդարտներով, արտադրանքի և ծառայությունների տեխնիկական պայմաններով, կազմակերպության ստանդարտներով սահմանվել տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին և նորմերին չհամապատասխանող պահանջներ և նորմեր</p>	<p>1.այո 2.ոչ 3.այո, եթե այդ պահանջները և նորմերը ավելի խիստ են, քան տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջները ու նորմերը և եթե դրանց վերաբերյալ ներկայացվում են համապատասխան ապացույցներ</p>

16.	Տեխնիկական կանոնակարգերի հրապարակումը որ օրենքով է կանոնակարգված	1.«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքով 2.«Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքով 3.«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով
17	Կարող են արդյոք միջազգային, տարածաշրջանային, միջպետական և այլ պետությունների տեխնիկական կանոնակարգերն ընդունվել և կիրառվել Հայաստանի Հանրապետությունում	1.ոչ 2.այո, եթե կան համապատասխան պայմանագրեր 3.այո, եթե կան միջպետական պայմանագրեր և եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը
18.	Տեխնիկական կանոնակարգերում վկայակոչված ստանդարտներում կատարվող ցանկացած փոփոխությունն անհրաժեշտ է համաձայնեցնել	1.համապատասխան տեխնիկական կանոնակարգեր նախապատրաստող պետական կառավարման մարմնի հետ 2. Հայաստանի Հանրապետությունում Առևտրի Համաշխարհային Կազմակերպության ծանուցման գործակալության հետ 3.ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների հետ
19.	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության հավաստումը կոչվում է	1.սերտիֆիկացում 2.համապատասխանության պարտադիր հավաստում 3. հայտարարագրում
20.	Կարելի է արդյոք տեխնիկական կանոնակարգում ամբողջությամբ կամ մասամբ ներառել ազգային ստանդարտների տեքստը կամ վկայակոչել ազգային ստանդարտները	1.այո, եթե ազգային ստանդարտները համապատասխանում են միջազգային ստանդարտներին և դրանք տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման միակ հնարավորությունն է 2.ոչ 3.Ստանդարտների կիրառումը պարտադիր լինել չի կարող
21.	Տեխնիկական կանոնակարգերով կարելի է սահմանել առաջընթացային պահանջներ	1.այո, օրինակ Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգը հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. Նոյեմբերի 11-ի N1592-Ն որոշմամբ 2.ոչ 3. Այո, միայն մեկ տարվա ժամանակահատվածով
22.	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված համապատասխանության պարտադիր հավաստման դեպքում սերտիֆիկատի կամ հայտարարագրի գործողության ժամկետը չպետք է գերազանցի՝	1.երեք տարին 2.չորս տարին 3.հինգ տարին

23.	Տեխնիկական կանոնակարգերի նախագծերի ծանուցման և հրատարակման կարգը ում կողմից է սահմանված	<ol style="list-style-type: none"> 1.Ստանդարտների ազգային ինստիտուտի 2.Հայաստանի Հանրապետության կառավարության 3.Հայաստանի Հանրապետությունում Առևտրի Համաշխարհային Կազմակերպության ծանուցման գործակալության 		
24.	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված, համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի և ծառայությունների ցանկը ում կողմից է հրապարակվում և ինչ պարբերականությամբ	<ol style="list-style-type: none"> 1.Համապատասխանության գնահատման ազգային մարմնի կողմից` ամիսը մեկը անգամ 2.Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից 3.Հայաստանի Հանրապետությունում Առևտրի Համաշխարհային Կազմակերպության ծանուցման գործակալության կողմից տարին մեկ անգամ 		
25.	Համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի կամ ծառայության համար տեխնիկական կանոնակարգերով կարող են արդյոք սահմանվել համապատասխանության հավաստման մի քանի սխեմաներ	<ol style="list-style-type: none"> 1.ոչ 2.այո 3.այո, եթե դրանք միայն հայտարարագրման սխեմաներ են 		
26.	Ինչ պարբերականությամբ է իրականացվում համապատասխանության հսկողությունը և որ փաստաթղթի հիման վրա	<ol style="list-style-type: none"> 1. տարին մեկ անգամից ոչ պակաս 2. սերտիֆիկացման մարմնի և սերտիֆիկատ տնօրինողի միջև կնքված պայմանագրի հիման վրա երկու տարին մեկ անգամ 3. պարբերաբար 		
27.	Համապատասխանության պարտադիր հավաստման և պետական վերահսկողության ժամանակ նմուշների ընտրման կարգը և քանակությունները որ փաստաթղթի հիման վրա է իրականացվում	<table border="1"> <tr> <td data-bbox="722 1167 778 1350"> <ol style="list-style-type: none"> 1. տեխնիկական կանոնակարգերի պահանջների 2. կատարումն ապահովող ստանդարտների 3. ցանկում նշված նմուշառման վրա տարածվող ստանդարտներով սահմանված կարգով և նվազագույն քանակներով </td> <td data-bbox="778 1167 1481 1424"> <p>միջազգային ստանդարտներով կազմակերպության ստանդարտներով</p> </td> </tr> </table>	<ol style="list-style-type: none"> 1. տեխնիկական կանոնակարգերի պահանջների 2. կատարումն ապահովող ստանդարտների 3. ցանկում նշված նմուշառման վրա տարածվող ստանդարտներով սահմանված կարգով և նվազագույն քանակներով 	<p>միջազգային ստանդարտներով կազմակերպության ստանդարտներով</p>
<ol style="list-style-type: none"> 1. տեխնիկական կանոնակարգերի պահանջների 2. կատարումն ապահովող ստանդարտների 3. ցանկում նշված նմուշառման վրա տարածվող ստանդարտներով սահմանված կարգով և նվազագույն քանակներով 	<p>միջազգային ստանդարտներով կազմակերպության ստանդարտներով</p>			
28.	Որոնք են սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթղթերը	<ol style="list-style-type: none"> 1. համապատասխանության սերտիֆիկատը կամ համապատասխանության հայտարարագիրը, կենդանական ծագման պարենային հումքի համար անասնաբուժասանիտարական նորմերին դրա համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը 2. տեխնոլոգիական հրահանգը 3. տեխնիկական պայմանները 		

29.	Պետական վերահսկողության հիմնական խնդիրներն են	<p>1.տնտեսավարող սուբյեկտների կողմից արտադրանքի, ծառայությունների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների խախտումների կանխարգելումը և վերացումը, տեխնիկական կանոնակարգերին արտադրանքի, ծառայությունների համապատասխանության ապահովումը</p> <p>2.տնտեսավարող սուբյեկտներին արտադրանքի իրացման աջակցումը</p> <p>3.արտադրանքի տեխնիկական բնութագրերի կատարելագործումը</p>
30.	Գլխավոր պետական տեսուչի և պետական տեսուչների կողմից արձակվող կարգադրագրերի ձևերը ուժ կողմից է հաստատվում	<p>1.Հայաստանի Հանրապետության կառավարության</p> <p>2.Համապատասխանության գնահատման ազգային մարմնի</p> <p>3.գլխավոր պետական տեսուչի</p>
31.	Պետական վերահսկողությունն իրականացվում է արտադրանքի	<p>1.նախագծման փուլում</p> <p>2.օգտահանման փուլում</p> <p>3.արտադրման, պահման, իրացման, փոխադրման, օգտահանման, ծառայության մատուցման փուլերում</p>
32.	Գլխավոր պետական տեսուչի արձակած կարգադրագիրը՝	<p>1.պարտավորագիր է</p> <p>2.իրավական ակտ է</p> <p>3.հրաման է</p>
33.	Գլխավոր պետական տեսուչի գործողությունները կարող են գանգատարկվել	<p>1.միայն դատարան</p> <p>2.կառավարություն կամ դատարան</p> <p>3.Համապատասխանության գնահատման ազգային մարմնի ղեկավարին կամ դատարան</p>
34.	Պետական տեսուչների գործողությունները կարող են գանգատարկվել	<p>1.սերտիֆիկացման մարմնի ղեկավարին կամ դատարան</p> <p>2.գլխավոր պետական տեսուչին կամ դատարան</p> <p>3.միայն դատարան</p>
35.	Գլխավոր պետական տեսուչի կարգադրագրերի բողոքարկման դեպքում կարգադրագիրը ինչ կարգավիճակ ունի	<p>1.չի կասեցնում կարգադրագրի կատարումը</p> <p>2.կասեցնում է կարգադրագրի կատարումը</p> <p>3.կասեցնում է կարգադրագրի կատարումը մինչև բողոքարկման պատասխանը ստանալը</p>
36.	Ինչ է համարվում կարգադրագրի չկատարումը և ինչ է այն առաջացնում	<p>1.կարգադրագիրը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարման մասին սահմանված ժամկետում տեսչությանը գրավոր չտեղեկացնելը առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով</p> <p>2.կարգադրագրի կատարում</p> <p>3. կարգադրագրի չկատարում, եթե սահմանված կարգով բողոքարկվել է</p>

37.	Պետական տեսուչները Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան պատասխանատվություն են կրում	<ol style="list-style-type: none"> 1. գլխավոր պետական տեսուչի ցուցումները չկատարելու դեպքում 2. պարտականությունները չկատարելու, անպատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու, պետական և (կամ) ծառայողական գաղտնիքները հրապարակելու դեպքում 3. ստուգումը հանձնարարագրում նշված օրվանից ուշ պետական վերահսկողության իրականացումը սկսելու դեպքում
38.	Պետական տեսուչի իրավասություններից է	<ol style="list-style-type: none"> 1. Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող արտադրանքի իրացումանը կասեցնելու վերաբերյալ գլխավոր պետական տեսուչին առաջարկություններ ներկայացնելը 2. Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող արտադրանքի իրացումը կասեցնելու վերաբերյալ կարգադրագրերի արձակումը 3. Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող արտադրանքի արտադրության կասեցնելը
39.	Հայտնաբերված խախտումների վերացման ժամկետի սահմանումը կարգադրագրերով համաձայնեցվում է	<ol style="list-style-type: none"> 1. Համապատասխանության գնահատման ազգային մարմնի հետ 2. տնտեսավարող սուբյեկտի հետ 3. գլխավոր պետական տեսուչի հետ
40.	Կարգադրագրերով նախատեսված պատասխանատվության միջոցները սահմանված կարգով վերացվում է	<ol style="list-style-type: none"> 1. Համապատասխանության գնահատման ազգային մարմնի կողմից 2. ստուգումն անցկացնող տեսուչի կողմից 3. գլխավոր պետական տեսուչի կողմից
41.	Պետական տեսուչի իրավասություններից է	<ol style="list-style-type: none"> 1. առաջարկությունների ներկայացումը գլխավոր տեսուչին՝ վերջինիս իրավասության հարցերով 2. տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող արտադրանք արտադրող արտադրամասի փակումը 3. օրենքով նախատեսված դեպքերում ստուգումն իրականացնելու մասին հանձնարարագրերի արձակումը
42.	Գլխավոր պետական տեսուչը իրավասու է վերահսկողության արդյունքները իրավապահ մարմիններին կամ դատարան ներկայացնելու համար և ինչու է ներկայացնում	<ol style="list-style-type: none"> 1. Այո, օրենքով նախատեսված դեպքերում վերահսկողության արդյունքների նյութերն է ուղարկում՝ պատասխանատվության միջոցներ կիրառելու համար 2. ոչ 3. այո, ստուգումներ իրականացնելու թույլտվություն ստանալու համար

43.	Պետական տեսուչների անօրինական գործողությունների հետևանքով տնտեսավարող սուբյեկտներին պատճառված վնասը ինչ կարգով է հատուցվում	1. Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով 2. Համապատասխանության գնահատման ազգային մարմնի կողմից սահմանված կարգով 3. տնտեսավարող սուբյեկտների կողմից սահմանված կարգով
44.	Ում կողմից է իրականացվում համապատասխանության հսկողությունը և որ փաստաթղթի հիման վրա	1. պետական վերահսկողության մարմինը հանձնարարագրի հիման վրա 2. սերտիֆիկացման մարմինն իր և սերտիֆիկատ տնօրինողի միջև կնքված պայմանագրի հիման վրա 3. արտադրանք արտադրող մարմինը իր և սերտիֆիկացման մարմնի միջև կնքված պայմանագրի հիման վրա
45.	Եթե վտանգավոր սննդամթերքը, սննդամթերքի հետ շփվող նյութերը և սննդային հավելումները վերաբերվում են խմբաքանակի մի մասին, ապա վտանգավոր են համարվում արդյոք տվյալ խմբաքանակի մեջ մտնող սննդամթերքը, սննդամթերքի հետ շփվող նյութերը և սննդային հավելումները	1. ոչ 2. այո, եթե փորձաքննությամբ հիմնավորված չէ մնացած մասի անվտանգ լինելը 3. ոչ, այն վտանգավոր լինել չի կարող
46.	Եթե պետական վերահսկողություն իրականացնող մարմինը հայտնաբերում է սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների վտանգավոր լինելը, ապա նա ինչպիսի գործողություններ է իրականացնում	1. Կասեցնում է ներմուծումը 2. Տեղյակ է պահում արտադրողին, մատակարարին 3. Իրականացնում է ամբողջ խմբաքանակի շուկայից հետկանչման գործընթացը և կապված ռիսկի աստիճանից ըստ անհրաժեշտության զանգվածային լրատվության միջոցներով իրազեկում է ազգաբնակչությանը
47.	Վտանգավոր սննդամթերք, սննդամթերքի հետ շփվող վտանգավոր նյութեր կամ վտանգավոր սննդային հավելումներ տնօրինողը դրա վտանգավոր լինելու կամ վտանգավոր լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի դեպքում ինչպիսի գործողություններ պետք է իրականացնի	1. դադարեցնի դրա արտադրությունը 2. անհապաղ սկսի դրա հետկանչման գործընթացը՝ ձևով տվյալ խմբաքանակի սննդամթերքը, սննդամթերքի հետ շփվող նյութերը և սննդային հավելումները ենթարկել առանձին հաշվառման ու պահման. բ) այդ մասին տեղեկացնել տվյալ սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների մատակարարին, ձեռք բերողին և լիազոր մարմնին 3. կասեցնի մատակարարումը
48.	Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության նպատակով կատարվող փորձարկումները որ փորձարկման լաբորատորիայի կողմից են իրականացվում	1. Կառավարության սահմանված կարգով մրցույթի արդյունքում լիազորված փորձարկման լաբորատորիայի 2. արտադրողի փորձարկման լաբորատորիայի 3. մատակարարի փորձարկման լաբորատորիայի

49.	Ում կողմից է սահմանված վտանգավոր սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող վտանգավոր նյութերի կամ վտանգավոր սննդային հավելումների օգտահանման և ոչնչացման կարգը	<ol style="list-style-type: none"> 1. պետական կառավարման մարմնի 2. արտադրողի 3. Հայաստանի Հանրապետության կառավարության
50.	Որ դեպքերում է արգելվում սննդամթերքի գովազդը	<ol style="list-style-type: none"> 1. եթե դրա անվտանգությունը հիմնավորող փաստաթուղթը բացակայում է, կամ եթե այն հատուկ նշանակության կամ բուժիչ հատկություններով սննդամթերք է 2. եթե այն չի անցել պարտադիր սերտիֆիկացում 3. եթե այն գենետիկորեն ձևափոխված սննդամթերք է